

ուսումը են կնիկները, և չկայ գործի մը առաքեալ և մարտիրոս՝ որուն տուած ըլլայ կամ քաղաքի տնայնած մը կամ գիւցադ-նուհի Հարս մը կամ արի մայր մը իր հոգւոյն մէջ շունչը:

Վերջին խրատ մը, աղջիկներ, Արջնիդ կեանքի կէս գարէ մը աւելի ունիք, պիտի տեսնաք մեծամեծ բաներ, աշխարհը խռովուած պատերազմներով, ուրախ և ցաւազին և հանդիսական պատահարներ, զոր չի կրնար փոխակեր մարդկային գիտութիւնը: Իսկ արդ, թող հանգիպի ինչ որ հանդիպի, ո՞ր ընկերական դասուն ալ պատկանիք, ինչ որ ալ ըլլան ապագային մէջ ձեր սիրելիներուն շահերը և հաւատքը, յիշեցէք որ երեք պիտի չսխալիք յանձնարարելով ամէնուն որ պահեն արդարութիւնը իրեցերուն մէջտեղ, վեհանձնութիւնը կոխենբուն մէջ, արժանապատուութիւնը իրենց յատուկ թըշուառութիւններուն և յարգանքը ուրիշներուն թշուառութիւններուն մէջ. որ ըլլայ միշտ ձեր վերջին պարտականութիւնը աղաչաւոր ձեռքեր կարկառել յաղթողին կատաղութեանը և կործանողին տառապանքին միջև, և թէ աստուածային առաքինութիւն մը դրուած է ձեր սրտին մէջ և ձեր խօսքին մէջ՝ բարկութիւնները իջեցնելու և բռնութիւնը դիմաւորելու, որով ամէն քաղաքականութեան և արդարութեան գաղափարական՝ յաղթանակէ երկրիս վրայ տուանց արեան և արեանց արցունքի, ծանր և հանգստաւ վեհափառութեամբը տառի մը՝ որ կը ծագի:

Գարձէք հիմաի աղջիկներու և աշակերտուհիներու զուարթ պարտականութիւններուն, գարձէք տանելու զարօցին մէջ բարի օրինակը, տանը մէջ սէրը, և ամէն կողմ բարութիւնը և կեանքը: Դորողուած հաւատքով ձեր խնամքներուն կ'աւանդենք, օվ վարժուհիներ, հայրենեաց ամէնէն սիրուն տրիւնը, մեր յոյսերուն ամէնէն փափուկ և ամէնէն նախնական ծաղիկը: Եւ զուր, աղջիկներ, հասունցէք անոնց, սիրով և աշխատութեամբ, երախտագիտութեան սպարաքը, որ զձեզ կը կապէ ձեր վեհափառ ժօրը հետ, Տուրիւն, վասն զի ինքն է որ զձեզ տուա իրենց, և իրենցմով, իրեն երախտաւոր և

սիրասուն գուտարներով, կ'ուզէ մեծարուած ըլլալ և սիրուած: Եւ եթէ ձեզի առած հայրական խրատներս ձեզ հագուոյն աւելի խորը տպելու համար՝ կրնայ օգնել իմ ըսելու ձեզի՝ որ ձեզի երախտագարտ կ'ըլլամ միշտ սիրայօժար մտադրութեանը համար որով առնոց մտիկ ըրէք, ասոր տպահով եզիք. Բարձրով՝ որ ինծի համար ալ ասիկայ տարուոյն զեղեցկագոյն օրերէն և ամէն աշխատութեան քաղցրագոյն մրցանակներէն մէկն է. և թէ նաև երկայն ժամանակ ետքը, նաև այն ժամուն որուն մէջ բոլոր կեանքի յիշատակները կը խոնուին մտքի մէջ իրեն մեզի վերջին ողջոյնը տալու համար, պիտի ըլլայ իմ անցեալիս ամէնէն աւելի սիրուն յիշատակներէն մէկը՝ այս բարախառն ծաղիկներով զեղեցիկ ետուն, այս երիտասարդութեան և յոյսի մեծ գանձը, որուն վրայ իմ հոգիս թափելու բերկրանքը և փառքը ունեցայ:

Տարիէ մը ցտեսութիւն, աղջիկներս. դարձէք հոս աւելի մեծցած, աւելի ծաղկագուռած, և Աստուած օրհնէ զձեզ և զձեզ պաշտպանէ:

ԹԳՎ. Հ. ԱՐԻՍՏԱՆԻՍ ՔԱՏՓԱՆՏՈՒԵԱՆ

Շարայարելի



ՀԱՆՈՍՈՒԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ՊԱՏԿԵՐՆ

(Շար. տես յէջ 207)

ՀԻՆԳԵՐՈՐԻ յայտնութիւնն այլ կեւրակէ օր է, յետ ութ աւար քան զառաջինի: Տէր Նազարեթեանն այնպէս կը խորհէ այսոր վերայ՝ ինչպէս առաջնոյն, նախորդի գործեցեալ պատարագին և իմաստեայ բանից անդոյ գորութիւնն այսոր վերայ. եւ տարածելով: Արդեօք Յիսուսի գէթ իւր ա-



Տարազք Ախալցխայի և Ախալքալաքի հայ կանանց.

Բազմավէպ 1899. էջ 270.

ռաջին երեւման ժամանակ տուած* հրա-
մանաւ մի եղաւ այդ, զմիաշարքով սրբերն
և ո. հացի բեկման համար: Չկայ ինչ ի
ս. գիրս, և այնչափ կարելի է ժխտել՝ որ-
չափ հաստատուել: Ժխտել կ'ըսեմ. որովհե-
տեւ չէ հնար. ցուցնել՝ թէ ընդ մէջ առաջ-
նոյն և ութերորդին առաքելաց ժողոված չլի-
նին բնաւ. այն երկուքն որ յարութեան ե-
րեկոյն օտիպեց զիրենք միաբան ծածկել ի
տան, մի թէ կրնան չհարկադրել զթմ քանի
մի օր զեռ թաքչել նոյնպէս: Ուստի ան-
հաւանական չէ կարծել՝ թէ ութերորդ աուր
ժողովումն այլ առաջնոց շարունակութիւնը
լինի, մի և նոյն վախճանաւ, և ոչ թէ միա-
շարքովի համար. վասն զի զոնքն այլ զեռ
փակ են ք երկուք կայ տակաւին, թէ և
Պատկերը չտեսնէ զայն: Առ այս կարդամք
զՅովհաննէս. «Եւ յետ ութ աուր զարձիս
էին ի ներքս աշակերտքն, և թովմաս ընդ
նոսա. զայ Յիսուս զորքն փակելովք», և կը
յանդիմանէ անհաւատ աշակերտը: Աետա-
րանիքը կարծես թէ կամաւ կը շնչտէ թով-
մայի այդ օր ներկայութիւնը, որպէս զի ի-
մացնէ մեզ՝ թէ Յիսուս յայտնեցաւ յառ-
կապէս այն աշակերտին համար, և ոչ թէ
միաշարքով: «Չմտաւ ած, կ'ըսէ Ոսկե-
բերան, զտեսնոն մարգարէութիւն, զիարդ
և վասն միոյ անձինն եցոյց զինքն՝ ու-
նելով զվերսն, և եկն զի ապրեցոսցէ և
զմինն» (Մեկն. ԹՀ. ԶԷ): — Հոս պատա-
րագի կամ ուսուել չյիշուի: և այդ անիշա-
տակութիւնն ինքնին կը ջրէր զայն, երբ
չունիմք այլուստ փաստ ինչ հաստատական:

Այսմ կու գայ վեցերորդ երեւումն յեզր
Տիրերեայ: Օրն անյայտ է. այլ միայն, թէ
մինչ զեռ ձուկն կ'որսային յաշակերտաց ո-
մանք, կու գայ Յիսուս կը հարցնէ. «Ման-
կունք, մի թէ ունիք ինչ ոստիոյ... Տե-
սանին կրակետդ կայծականց և ձռակն մի ի
վերայ և հաց... Գայ Յիսուս, և անուն
զհացն և տայ նոցա. նոյնպէս և զձռակն»:

Մահակ վրդ. այս երեւումն եւ կերակէ կը
դնէ, և հացի տրուիլը պատարագ: Միտ դրէք.
մեզսիտական այն խիստ շարքուն փոխա-
նակող միաշարքով կը սրբեն առաքելաց
ձկնորսութեան: Շարքով օր Յիսուսի հրա-
նագործութիւնը, աշակերտաց հասկ կորզել՝
ափի մէջ շփել և ուսելը կը զայնակեցնէր
զհրեայս. և նոցա զայսպիսիս ի ըրիստոնէու-
թիւն. բերելու համար՝ ըրիստոնէից շարքով
(կիրակէն) կը պատուեն ձուկն որսալով՝ ա-
մենայն պատրաստութեամբ, նաւով և ուսկա-
նօք: Ահա բուն հոս է «նորահրաշ զիտը»:
Ապա թէ ոչ, հարկ է ըսել՝ թէ միաշարքով
զեռ չէր սրբուած. և հետեւաբար նոյն ա-
ուր ճաշակումն այլ չկարէր ո. հացի բեկումն
լինել: Բաց աստի, չեմ կարող ըմբռնել՝ թէ
այն Յիսուս, որ իւր առաջին պատարագը
զարդարեալ վերնատան մէջ կատարեց, և
որոյ օրինակը պահեցին և աշակերտքն**,
և միշտ «առանձին բեկանէին զհացն» (Գրծ.
Բ, 46), ծովափն աւազի վերայ նստած՝ պա-
տարագած լինի: Դարձեալ՝ թէ Յիսուս ի
վերնատան և թէ առաքելաց օովոր էին երե-
կոյի ընթերցաւ ժամուն պատարագել***. իսկ
Տիրերեայ յայտնութիւնն առաւօտուն էր:
Բայց այս ճաշակման որպիսութիւնն արդէն
Յովհաննէս կը ցուցնէ մեզ՝ յաջորդ բանին
մէջ. «Եւ իբրեւ ձաշեցին, առէ» և այլն:
Բառս ձաշել՝ թէ ո. զրոց և թէ առ հասա-
րակ հայերենի մէջ միշտ կը նշանակէ հաց
ոռտել: Եւ որովհետեւ հոս այդ կերակրոյ
նիւթն էին Յիսուսի տուած հացն և ձռակն,
ուստի ողբա որ և է խորհրդական նշանակու-
թենէ հեռի են:

Ըստ ինձ ծանօթ հնախօսութեան, Հոռվ-
մայ ստորերկրեայց մէջ նկարեալ ձռակն և
հաց ի նշանակ հաղորդութեան՝ չեն առեալք
Տիրերեայ անցքն. այլ ձուկն առ նախնի
ըրիստոնեայս կը նշանակէր պարզապէս զՅի-
սուս, իբր որդի մարդոյ մտեալ ի ծով աշ-
խարհիս (Որդեան. մեծն Գրիգ.)։ Իբր լու-

* Ձի քան զայն կանուսն անհնարին է:

** «Եւ էին լապտերք բազումք ի վերնա-
տանն, ուր էաք ժողովեալ... բեկանել զհացն»

(Գրծ. Ի, 7-8):

*** Աւետարանը: Գրծ. Ի: Ա կար. ԺԱ, 21:

սատու մարդկան և հալածիչ սատանայի՝
 ըստ ձկան Տուփայ (ս. Ոպտատ), իբր շար-
 չարեալ՝ ըստ ձկան խորովելոյ յեզր Տիբե-
 րեայ (ս. Աւգ. Գրիգ. մեծն). իբր հիմնադիր
 մկրտութեան՝ մանելով ի Յորդանան (ս.
 Ոպտատ, Որինես), և այլ պէսպէս մտօք*
 Միով բանիւ՝ ստորերկրեայց այս Զուկն Տի-
 բերեայ եզրը մատուցուած և. խորհրդէ մի
 շծագի բնաւ. այլ է զուտ զաղափար Փրկչին,
 որ առ իւր գտուած հացերը (ա՜հ բուն
 նշանակի խորհրդոյն) կու տայ հաւատացեալ
 լոցս**։ Ս. Պատրիկն ի թղթին առ Պամաք. կը
 գրէ. «Հացն ճշմարտ և շուրջ կենդանիք
 ձկան» (ԺԱ), յորում հացն ճշմարտ և
 չորք կենդանիք՝ խորհրդական Զկան կանոնիս
 խոստացածքն են (ՅԿ. Զ, 32. Դ, 10),
 այնքան հեռիք ի Տիբերեայ, Դարձեալ կան
 ի ստորերկրեայց նկարեալ ձկնաձը՝ որ հաց
 կը ճաշակեն, նշանակելով զքրիստոսնայս***
 որ կը մերձենան ի խորհուրդն****. Կար-
 ծեմ՝ բնական խելքն այլ չներէ, որ նախկին
 քրիստոնեայք թողած լոբեմ վերստատուը,
 առաջին և ակնյայտին հանդիսարան պա-
 տարագին, երթան ծովակին ջրերէն մուրալ
 և. խորհրդոյն օրինակը։

Յովհաննէս, կ'ըսէ Պատկերն, Տիբերեայ
 երեւումն երրորդ կը կոչէ. «Զայս երիցս ան-
 գամ երեւեալ աշակերտացն», որ աւելի
 պիտի լինէր՝ նկատելով բան զայս յառաջ
 հինգ երեւմունքը. ուրեմն կիրակէի և պա-
 տարագի համար երրորդ կը կոչէ։ — Այս
 ինքնին կը խախտի, եթէ նկատեմք, որ յետ
 առաջին աուր երկիցս բեկման հացի յեմ
 մաւուս և ի տան և յետ ութերորդ աուր
 բեկման (բոլորն ըստ Պատկերին), Տիբե-
 րեայն չորրորդ կը լինի։ Ուստի Յովհանն-

նու երրորդին վերայ այլապէս խորհելի է.
 հարկ է դիտել՝ որ աւետարանիչս աշակեր-
 տաց խմբին կամ բազմութեան երեւմանց
 միայն ուշ կը դնէ. «Երեւեալ աշակերտացն».
 որով այս երրորդ կը լինի։ Եթէ այդչափ
 կատարութիւն կու տայր հացի բեկման,
 մինչեւ այդոր համար անտեսել միւս յայտ-
 նութիւնքը, ինչո՞ւ առաջին երկու. յայտնու-
 թեանց մէջ չլինէ զայդ, մինչ Տիբերեայ եզրը
 գտնէ մի սոսկ ճաշակումն կ'աւանդէ։ Ոսկե-
 բերան տիբերականին իսկ տարակուսի կ'են-
 թարկէ Փրկչին կողմանէ. «Բայց աստ ոչ
 ասէ՝ թէ եկեր ընդ նոսա» (մկ. ՅԿ. 2Է)։
 Ս. Եփրեմ կը կերցնէ, սակայն հաց լոկ
 և ձուկն. իսկ հոն զինի լինելը, առանց որոյ
 կարելի չէր պատարագել, կը մերժէ (ի յար.
 Փրկչին, Դ, 62)։ Բայց ուտելն ընդհանուր
 կարծիք էր հնոց. «Նա, կ'ըսէ և Եղնիկ, յետ
 յարութեան կերաւ ձուկն՝ զոր եղիտ առ
 ձկնորսն» (Եղծ աղեղ. Դ, ԺԲ)։ Յամե-
 նայն զկէս սակայն այս հաւատարմէ թէ ոչ
 յիշատակ և ոչ պատշաճութիւն կայ հոն հացի
 բեկման։ Մինչեւ անգամ այս վերջին բա-
 ցատութիւնս եթէ լինէր, ըստ ս. գրոց պի-
 տի կարենար նշանակել և սովորական կերա-
 կուր՝ թէ յառաջ և թէ հոս յետ հաստատու-
 թեան խորհրդոյն։ Յիսուս իւր քարոզութեան
 ժամանակ սովոր էր ըստ հրէից ի ճաշելն՝
 հացը «բեկանել կամ մանրել և տալ ցա-
 շակերտսն կամ բաշխել»****. և Պատրոս յի-
 տալիս նաւարկութեան մէջ իւր նաւակոծեալ
 չեկեանոս ուղեկիցքը բաշխելուր համար որ
 կերակուր ուտեն, «Առեալ հաց՝ գոհացաւ
 զԱստուծոյ առաջի ամենեցուն, երկի և սկսաւ
 ուտել»***** (Գրծ. ԻԷ, 35)։ Աստի առին
 ուղեւեալք բեկանել զհաց, սովորական հացին

* Մարտինի, բարն. քրիստ. հն. յէջ 654-6։

** Անդ, 291։

*** Հատ բանից Փրկչին առ ձկնորսն Պետրոս,
 Թէ «յայտ հեա՞ն զմարգիկ որսայցես ի կեանս»
 (ՂԿ. Ե, 11)։ և Թէ «նման է արքայութեան
 երկնից ուսուսնի արկելոյ ի ծով և յամենայն
 ազգաց ժողովելոյ» (Մտ. ԺԲ, 47)։

**** Մարտինի, անդ, 656-9։ Պատր. Ալլարդ,
 ի Հոմմ ստորերկրեայ, Դ, Բ, 322։

***** Մար. ԺԻ, 19. ԺԵ, 36։ Մրկ. Զ, 41. Ը,
 6։ ՂԿ. Թ, 16։ ՅԿ. Զ, 11։

***** Հրէից նախնական ժամանակներէն կը ծա-
 զէր՝ Աստուծոյ նուիրեալ բազարէն եւս «բրդել
 պատառս պատառս» (ՂԵւ. Բ, 6)։ Նոյնպէս
 կ'ընէին և կը բացատրէին սովորական հացի
 (կամ կերակուր) ճաշակումն այլ. «Բրդեա
 քաղցեալց զհաց ք» (Ես. ԵԸ, 7։ Դան. ԺԻ, 32)։

իմաստը խորհրդականին եւս տալով զազտնապէս, սակայն առանց բառնալու զայն յառաջնոյն։ Եւ մեծ. Նազարեթեան ուր և հաց բաղը տեսնել և կամ զայդ իսկ չտեսնել, բարձրանալի բարեպաշտութեամբ իսկոյն ս. Հաղորդութիւն կ'իմանայ։

Կը մնան եօթներորդ և իններորդ յայտնութիւնք։ Առաջնոյն վերայ բնաւ չիօտի Պատկերն. ես այլ չեմ խօսիր այդոր անյիշատակ կիրակէի կամ պատարագի վերայ։ Մանաւանդ որ արդէն աշակերտաց, որ տեսին Փրկիչը, «աւելի եւս քան զհինգ հարիւր» թիւն՝ փոխանակ տան՝ բացօթեայ ենթադրել կու տայ երեւման վայրը և անյարմար մատուցման ս. խորհրդոյն, ինչպէս ըսի նախորդին համար։

Մահակ վրդ. իններորդն անուշադրութեամբ կը զատէ յերկուս, կոչելով չորրորդ և հինգերորդ. չորրորդն ի Գալիլեա՝ զնելով նոյնպէս ի կիրակէի և պատարագաւ, և հինգերորդն ի Բեթանիա՝ ի հինգշաբթի և նոյնպէս պատարագաւ։ Զորրորդն հինգերորդին հետ մի է, ինչպէս ցուցի ի սկզբին։ Այս վերջին երեւման մասին մեծ. Նազարեթեան Գործոց մէջ ինչ կը կարգացնէ. «Եւ ի հաղորդել ընդ նոսա հացի» պատուէր տայր նոցա յերուսաղեմէ մի՛ մեկնել. և կը հարցնէ ուժգին. «Կրնանք արդեօք այս հացի» հաղորդելն ս. ճաշակն դուրս բանի մը վերագրել։ — Կրնամք գեղեցիկ և տես թէ՛ ըրպէս։ Դուկասոս աւետարանին և Գործոց զրէշը նոյն անձն է. և ինչ որ աւետարանին մէջ կ'ըսէ, նոյնը կը կրկնէ Գործոց մէջ. «Յառաջնումն» յարութեան երեկոյին երեւմանէն, յորում՝ ճաշակեց Յիսուս սովորական կերակուր՝ ինչպէս տեսանք, կ'անցնի պատմել թէ վերջին պատուէրը տուաւ աշակերտաց, գնաց ի Բեթանիա՝ և համբարձաւ. կարծես թէ այդ ամէնը մի աւուր մէջ եղած լինի. և կը լռէ յարութեան առաջին օրէն մինչեւ վերջին պատուէրը պատահածները։ Գործոց մէջ այլ յետ հարեւանցի ակնարկութեան մի քառասուն աւուրց վերայ, կը բռնէ աւետարանին կարգը, Հաղորդել ընդ նոսա հացի, տալ մի և նոյն պատուէրը, և համբառնալ Զթիթենաց լեռնէն։ Ապա ու-

րեմն հոս այլ հացիւ Հաղորդելն, թէ և միացած վերջին պատուէրին հետ, աւետարանին առաջին աւուր սովորական կերակուրն է։ — Այլ դիտողութիւն մի եւս։ Դուկաս Գործոց մէջ այլուր չորս անգամ կը յիշէ պատարագը, սակայն միշտ հաց և թեկանել բառերով, և ոչ բնաւ լոկ առաջնութիւն. «բեկտնելոյ հացին» (Թ, 42), «բեկանելն զհացն» (46), «բեկանել զհացն» (Թ, 7), «եբեկ զհացն» (11)։ Ուստի զժուարաւ կրնար հասկանալ իւր այս սովորութեան՝ մի անգամ միայն գործածել նոյն մտած լոկ հաց, որ բեր անցած յիշուած է յաւետարանն՝ նա և իւր գրածին մէջ՝ յատուկ կամ կերակրոյ իմաստիւ. բաց ի ՅՀ. Զ զիսէն, յորում սակայն ստեղծ կը կրկնուի թէ «եւ եմ հացն», «հացն զոր ես տաց՝ մարմին իմ է», որպէս զի չէփոխեն սովորական իմաստին հետ։ Հակառակ պարագայի մէջ հաց բառին հետ կարեւոր էր թեկանելն այնու եւս, զի խաչի զոհին խորհրդական նշանակութիւնը կը կայանայր՝ յայնմամբ և միշտ՝ հացի թեկանել մէջ, որով կամ լծորդութիւն քաշուել վարեցան Յիսուս և աւետարանիչը պատարագի յիշատակութեան մէջ։ Եթէ կ'ուզէք, Ոսկեհերանի կարծիքն այլ լսեմք Գործոց ճաշակման որպիսութեան վերայ. «Դուկաս այլուր ասէ՛ թէ հաղորդեցաւ ընդ նոսա հացի»։ այլ թէ՛ ըրպէս, ոչ է մեզ ասել. քանզի հրաշափառագոյն իմն օրինակաւ լինել այն. ոչ իբր թեոքեանէն իմն պէտք ունենալով այնուհետեւ կերակրոյ, այլ զիջման, առ ի յարդիւնս յարութեանն լինելոյ» (մեկ. ԵՀ. 21)։ Եւ յարութեան հաստատել այդ ճաշակութիւնն ոչ թէ վերջին, այլ առաջին օրերը պիտոյ էր, նոյն ինքն ի Դ երեւման։

Թողլով արդ Դ, Ե, Զ, Է, Ի յայտնութիւնը, յորս տեսանք թէ կամ հինգ չկայ և կամ յիշատակ պատարագած լինելոյ, կը մնայ մի միայն «բեկումն հացի» յիշմանս. այս պատմաբան անցեալ անգամ ըսի իբրաւմբ, թէ «Մի պատարագ կամ բեկումն հացի, որ կը յիշուի այդ աւուրց մէջ յիշմանուս, ինքն Յիսուս անձամբ կատարեց»։ Ինչ ծանօթ սակաւիկ Հայերենի համեմատ՝ այս խօսքս կը նշանակէ, թէ յիշուածը մի

պատարագ է, և ոչ թէ մի պատարագ միայն եղած է քառասուն աւուրց մէջ՝ ինչպէս կը հասկանայ քննադատեալս։ Բայց նկատելով ցարդ յուզուած ճաշակմանց սոսկական իմաստը, զոր տեսանք նոյն իսկ հացի բեկման մէջ եւս, արդարեւ կը տարուիտեւր՝ թէ յիմնաւուս յիշուածն այլ պատարագ չի նի*։ Որովհետեւ նախ՝ զոգցես անյարմար էր կատարել զայն ի ներկայութեան լոկ երկու հոգւոյ։ Երկրորդ, Ղուկաս կ'աւանդէ՝ թէ նոցա չճանաչէին զԹիսուս նախ քան զբեկանել և տալ հացին, և յետ տաղոյն ծառնան, ուստի Թիսուս իւր ս. մարմինը տուած պիտի լինէր այնպիսեաց՝ որք չգիտէին այնոր իսկութիւնը, որ կարի անպատեհ բան կը լինէր։ Եւ դարձեալ՝ Թիսուսի ուսելոյն նպատակն էր, ինչպէս ցարդ տեսանք, հաւաստել այնու՝ թէ մարմնով է. ուստի պարզապէս ուսել, և ոչ թէ պատարագել։ Ահա նոյն երեկոյին բազմութեան առջեւ վերստին կերաւ՝ առանց պատարագելու։

Համառոտեմ ցարդ ըսածներս։ Մեծ. Նա. զարեթեան կը փափաքէ՝ որ առաքելոց ժողովը կամ Թիսուսի յայտնութիւնը միշտ կիրական եղած լինին (բաց ի վերջնոյն), և միշտ պատարագաւ։ Ան այս ուրիշ փաստ չունի, բայց եթէ չորրորդ և հինգերորդ եւրեմանց կիրակէն, և չորրորդին և վեցերորդին կարծեցեալ բեկումն ս. հացի՝ բուրբին տալ։ Մեք տեսանք՝ թէ այդ երկու կարծիքն այլ անհիմն են և երեւակոյական։ Նա թէ դեռ չճանողութիւն, — եթէ կարելի է չհամազօրել, — իւր իսկ խօսքով պիտի տամ վերջին պատասխանս։ Խօսելով նա առաքելապետին «կերաք և արբաք...» բացատրութեան մասին, կ'ըսէ. «Պետրոսի սոյն խօսքերն ցոյց կու տան՝ Յովհաննու երեք, և Մատթէի մի, և Ղուկասու և Գործոց (որ կ'ընեն հինգ), և դեռ անդէն յիշատակուած ժողովներու մէջ (որ տասնի կը ծոռենան) փրկչին յայտնութիւնն, ս. հացի բեկումն,

ոչ մի անգամ, այլ կրկնուած և երեքիշուած բազմապատիկ»։ Եւ որովհետեւ Թիսուս յետ յարութեան հազիւ վեց կիրակէ ծնաց յաշխարհի, ուրեմն հինգ ծանօթ և այլ խումբ մի անյիշատակ ժողովոց մասնակցելու համար՝ կիրակէն գուրս այլ երեւելու էր, և կիրակէն գուրս այլ բեկանելու զհացն, եթէ երեկ միշտ։

Իսկ իմ խոնարհ՝ և ոչ ալտուս մտաց տեսութիւնն յարութեան քառասուն աւուրց վերայ՝ այս է. Թիսուս աւելի քան հինգ անգամ երեւեցաւ աշակերտաց ժողովոյն անխորտի որ և է օր։ Եւ ի ցոյց իւր յարութեան՝ մերթ ճաշակեց եւս նիւթական կերակուր։ Անշուշտ այդ ժամանակ ուսոյց նոցա սրբել զմիաշաբաթը, և կարելի է, որ դեռ չհամարաձած՝ սկսաւ սուրբ պահել տալ զայն։ Բայց թէ միանգամայն ս. հացն այլ երեկ նոյն օրերը, այդ անկարելի առաջին կիրակէն, յայլս գէթ անյայտ է ի ս. գրոց և ի հարց. զուցէ երբեմն երեկ, զուցէ և չերեկ բնաւ. երկուքն այլ անստոյգ են։ Փիտեմ միայն, որ պատարագն՝ այն քառասնից մէջ գոնէ՝ անհրաժեշտ պայման չէր գլխաւոր սրբելու. ըստ որում երբ վերացաւ Թիսուս, առաքելաք այն օրէն մինչեւ ի գալուստ հոգւոյն Ահիւ հանապազորդեալ միաբան յաղօթս» (Գործ. Ա, 14), և յիշուի թէ զհացն այլ բեկին, թէ և այդ աւուրց մէջ կիրակէ մ'այլ կայր. ուր նոյն Գործոց պիտի յետ իշման հոգւոյն՝ աղօթից հետ հացի բեկումն այլ կը յիշէ խնամով. «Հանապազօր կանխեալ միաբանութեամբ ի տաճարն, և աստեղին բեկանէին զհացն» (Թ, 46). «Եւ էին հանապազօր ղեալք... բեկանելոյ հացին և աղօթից» (անդ, 42). թէ և նոյնպէս աղօթքն հանապազօրեայ և պատարագը մի անգամ յեթիցեկի։ Ուստի և նախորդ կիրակէից մէջ պատարագի ստեպումն և կատարումն անհաստատի է։

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

Շաքայարելի

* «Եւ եղեւ ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, երեկ և ետ նոցա և Եւ նոցա բացան աչք և ծանեան զնա, և նա եղեւ ի նոցանէ աներեւոյթ» (Ղ. ԻԻ, 30-31)։